Ճարտարապետ Հովհաննես Մարգարյան

(հուշ երեկո)

Այնքան անսպասելի, այնքան անժամանակ հեռացավ և այնպիսի մեծ ափսոսանքի զգացմունք ծանրացրեց մեր սրտերի վրա մեր սիրելի Հովիկը, որ մարդ ակամայից լլկվում, չի իմանում ի՞նչ ասի և ի՞նչ ձևով ասի, որ այնքան խորթ չթվա, որ մարդ իր ասածից չսառսռա:

Ավա՜ղ, բանն այն է, որ մի տարի է արդեն, որ այդ ռեալ իրականություն է, տխուր իրականություն, բնության մեջ տեղի ունեցած մի սխալմունք, որն ուղղել մենք վաղուց ի վիճակի չենք: Կյանքը սերնդափոխ է լինում, թվում է ամեն ինչ բնական:

Մի ժամանակ, երբ խոսում էին Թորամանյանի, Թամանյանի մահվան տարեդարձի մասին, ինձ թվում էր, թե այդպես եղել է, և մենք եղած սովորույթը շարունակում ենք. այս անգամ, արդեն, այս խորթ է թվում, հատկապես մեկ տարի առաջ, չէ՞ որ մինչ այդ մեզ ոչինչ չէր բաժանում միմյանցից, երբ անհրաժեշտ էր լինում, զանգահարում, հանդիպում էինք, հանդիպելիս հարց ու փորձ անում հետաքրքրող խնդրի վերաբերյալ և հանկարծ մի բաժանում տեղի ունեցավ, որի բնույթը ոչ սովորական, հավիտենական է:

Բայց էլի պատահում է, որ մոռանում ես, մտքովդ անցնում է զանգահարել, հարցնել, ու ակամայից հիշում ու կոտրվում ես. բայց չէ որ բոլորովին հնարավոր էր, որ նա առնվազն մի երկու տասնամյակ էլ շարունակեր իր գործնական կյանքը:

Այդ զգացմունքը անմիջական է դառնում, երբ անցնում ես նրա նախագծած անավարտ շենքի մոտով Մռավյան փողոցի վրա (այն իմ պատուհանի դիմացն է, աչքերիս առաջ, հեղինակը՝ մտքիս մեջ):

Ճարտարապետ Հովհաննես Մարգարյանին իմ անձնական մոտիկությունն սկսվեց 1961 թվականին, երբ անհրաժեշտ եղավ նրա համաձայնությունն ստանալ իմ «Զվարթնոց» աշխատության խմբագիրը դառնալու համար:

Նա սկզբից հրաժարվեց, ասելով, թե. «այդ գործի մասնագետ չեմ», ապա իմ համառությանը տեղի տալով, նա պայման դրեց. «եթե միայն բոլոր հարցերում համաձայնության գանք»: Այդ ձևով էլ որոշեցինք ու գործի անցանք:

Երկու օր չորսական ժամ զբաղվեցինք լուսանկարների և գծագրերի վերլուծությամբ: Իմ խմբագիրը ինձնից վերցրեց հնարավոր անհրաժեշտ գրականությունը, ներառյալ նախորդ վերակազմություններին վերաբերող նյութերը և հանգամանորեն ծանոթացավ դրանց: Այդպիսով նա մտավ հունի մեջ խորապես զգալով հարցի էությունը: Հենց սկզբից ես նկատեցի, որ նախքան այդ բոլորը, մեր հանրապետության այդ առաջատար ճարտարապետը՝ Հովհաննես Մարգարյանը, անտարբեր չի եղել Զվարթնոցի հետ կապված խոսակցությունների և որոշ հետազոտողների աշխատանքների արդյունքների նկատմամբ: Նրա սրտին մոտ էր այդ հարցը: Թերևս այդ էր պատճառը, որ նա, հակառակ իր անշտապ բնավորությանը, կարճ ժամանակամիջոցում հաղթահարեց խմբագրի ոչ հեշտ պարտականությունը: Մենք միասին երկու-երեք անգամ ընթերցեցինք աշխատությունը, մտցրինք փոփոխություններ, անհրաժեշտ համարեցինք կատարել լրացուցիչ չափագրություններ (որոնք և կատարվեցին):

Շատ ուսանելի էր, որ Իվան Սերգեյիչը մեծ ուշադրությամբ էր վերաբերվում ամենափոքր խնդիրներին անգամ, ամեն բառին, ամեն հարցին, ոճական կողմին, լեզվի հարթ լինելուն, մտքի հստակ շարադրմանը: Նա, նույնիսկ, անհրաժեշտ համարեց ռուսերեն ամփոփումը (20 էջի սահմաններում) տպագրելուց հետո քանդել, նորից խմբագրել: Իմ հարգելի խմբագիրը իմ «Զվարթնոցին» վերաբերվում էր այնպես, ինչպես իրեն անձնական գործին, նա խոր պատասխանատվության զգացումով էր նայում այդ գործին, այնպես, որ ինքը անձամբ ի վիճակի լինի պաշտպանել և հաստատել աշխատության բոլոր դրույթները, եթե նույնիսկ հեղինակը բացակա լինի:

Ոմանք երկար ժամանակ այն կարծիքին էին, որ ճիշտ չէր կատարվել «Զվարթնոցի» խմբագրի ընտրությունը: Ես, անձամբ, մինչև վերջ էլ այն կարծիքին եմ, որ այդ միակ ճիշտ ընտրությունն էր: Մեր ճարտարապետներից և ոչ մեկի մոտ այնպես

ներդաշնակ համակեցության մեջ չեն ճարտարվեստն ու ինժեներիան, ինչպես Մարգարյանի մոտ էր այդ: Իսկ «Զվարթնոց» աշխատությանը հենց այդպիսի խմբագիր էր պետք: Անկասկած, չենք ժխտում նաև, որ աշխատությունը կշահեր, եթե մի ուրիշն էլ աչքի անցկացներ այն մի այլ կարգի խմբագրողի դիրքերից:

Համատեղ աշխատանքի ընթացքում նկատվում էր, որ Իվան Սերգեյիչը հաճույքով է զբաղվում այդ գործով, միշտ արթուն էր նրա ստեղծագործական միտքը: Պատահում էր այսպես՝ ես կարդում էի որոշ բաժին և դեռ խոսքի կեսում միջամտում էր. «իսկ ինչու՞ այս մասին չես ասում, ինչու՞ այն մասին չես ասում», և խաղաղվում էր, երբ իր հարցերին հաջորդում էին արդեն շարադրված պատասխանները. Նրա հաճելի էր այն, որ ինքն ասում է այն, ինչ մինչ այդ չէր լսել, ինձ համար էլ հաճելի էր այն, որ նա այն էր ասում, որը ես արդեն գրել էի, և այդ վիճակը մի տեսակ հաստատումն էր գրվածի հավաստիության:

Մի երեկո Իվան Սերգեյիչը առաջարկեց հանել այն հանդիմանությունը, որ ես տողատակում գրել էի, ուղղված Խալփախչյանին, որ նա Գեղարվեստի հանրագի-տարանում կողք-կողքի տեղադրել էր Թորամանյանի և Մնացականյանի վերակառուց-ման գծագրերը: Ես չհամաձայնվեցի, ասելով «այդ անպայման անհրաժեշտ է»: Հետևյալ առավոտյան վաղ (հազիվ ժամը 7-ն էր) զանգահարում է Իվան Սերգեյիչը. «Տիրան, տողատակի քո հանդիմանությանը լրացրու «անհանդուրժելի շտապողականության արդյունք» արտահայտությամբ»: Վերոհիշյալը, փաստորեն, ավելի ուժեղացնում էր տողատակի գրվածքը: Ինչ խոսք, որ Իվան Սերգեյիչի այդ լրացումը այդ ձևով գրված է աշխատության տողատակում:

Այս ցույց է տալիս, որ մեր ճարտարապետության պատմության կարևոր հարցեր նրան մտահոգություն են պատճառել և նա անտարբեր չէր նման խնդիրներում:

Ականավոր ճարտարապետ Հովհաննես Մարգարյանը շատ գեղեցիկ էր, որպես մարդ, պարզ ու հասարակ, ամենակրտսեր գործակցի հետ նա այնպես էր, որ թվում էր, թե նրանք հավասարներ են, հասակակիցներ, զգացնել չէր տալիս, թե ինքը ո՞վ է,

աշխատակիցը՝ ով: Իհարկե, նա նաև գիտեր այդ զգացնել տալ այնպիսիներին, որոնք որոշակի հավակնություններով էին փորձում չափվել կամ «աչք մտնել»:

Պրակտիկ ճարտարապետ Հովհաննես Մարգարյանը նաև խելոք էր իր վերլուծական մտքով, մտքի ամփոփման ուժով, բարդ երևույթների պարզ ձևակերպման շնորհքով, չի կարելի մոռանալ, թե ինչպես մեր բուռն վեճերի երեկոները ավարտվում էին նրա հստակ ու համապարփակ ձևակերպումներով: Այդպիսի բնույթի էին նաև նրա հոդվածները միութենական մասնագիտական հանդեսներում:

Ստեղծագործող ճարտարապետ Մարգարյանը սուրբ ակնածանքով էր վերաբերվում պատմական հայ ճարտարապետության մեծ տրադիցիաներին, ռեալ մոտեցում ուներ ներկայի կառուցումներին և լավատեսությամբ էր նայում հայ ճարտարապետության ապագային նոր ժամանակներում:

Հովհաննես Մարգարյանը հայ շինարար ժողովրդի տաղանդավոր զավակն էր, նրա հարազատ որդին:

Մեր ժողովուրդը հարգանքով ու սիրով կպահպանի նրա հիշատակը:

14/I 1965

ք. Երևան